ՏԱՐԵԳՐՈՒՅՑ

2019

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓՈԽԱՆՈՐԴ ՏԵՐ ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Արարատյան Հայրապետական թեմը կազմավորվել է 4-րդ դարի սկզբին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը ձևավորեց Հայ Առաքելական Եկեղեցու եպիսկոպոսական կառույցները:

449թ. տեղի ունեցած Արտաշատի հայտնի ժողովում կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցին (441-451թթ.) Եղիշեի կողմից անվանվում է «Եպիսկոպոս Այրարատի» (Ազգ. 400; Սրբոց Հօրն մերոյ Եղիշեի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 22): Այս կարգը պահպանվեց դարերի ընթացքում և Արարատյան թեմն այսօր էլ կրում է «Հայրապետական» անվանումը՝ անմիջականորեն կառավարվելով առաջնորդական փոխանորդի կողմից, ում նշանակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանը: 2018թ. դեկտեմբերից Արարատի մարզի հոգևոր տեսուչ է նշանակվել Գերաշնորհ Տեր Գևորգ եպիսկոպոս Սարոյանը: Ներկայումս Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: 2019 թվականի դրությամբ թեմում գործում են 39 եկեղեցի, 10 մատուռ: Երևանում գործում է 18 եկեղեցի, 8 մատուռ: Հոգևոր ծառայություն է մատուցում 33 քահանա: Արարատի մարզում գործում է 21 եկեղեցի, 2 մատուռ: Մարզում հոգևոր ծառայություն է մատուցում 1 եպիսկոպոս և 21 քահանա: Ընդհանուր առմամբ թեմում հոգևոր ծառայություն է մատուցում 56 հոգևորական՝ ներառյալ առաջնորդական փոխանորդը:

Լինելով ազգային՝ Հայ Առաքելական եկեղեցին և ի մասնավորի՝ Արարատյան Հայրապետական թեմը կարևորում է ազգային գիտակցության և ավանդույթների զարթոնքն ու նորովի մատուցումը: Հովվական խնամքի, հոգևոր քարոզչության, սոցիալական ու կրթական առաքելությունն արդյունավետ և համակարգված իրականացնելու համար թեմում ձևավորվել են մի շարք կառույցներ՝

1. Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
2. Հայ Եկեղեցասեր երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
3. Խուլերի համայնք
4. Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ
5. Ծնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
6. Տեղեկատվական բաժին՝ էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, www.qahana.am կայքով, սոցիալական ցանցերում գործող էջերով, «Շողակն Արարատյան» և «Մանանա» ռադիոհաղորդումներով
7. «Շողակն Արարատյան» ամսաթերթ
8. Գրադարան
9. Երիտասարդաց միություններ
10. Տիկնանց միություններ
11. Կիրակնօրյա դպրոցներ
12. Ծխական խորհուրդներ
13. «Շողակաթ» հոգևոր գրախանութ:

2019թ. ընթացքում Արարատյան Հայրապետական թեմում կատարվել է 2826 պսակ և 12232 մկրտություն:

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍ

ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՄԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ
Տեր Պետրոս ավգ. քին. Մալյան (հոգևոր հովիվ)
Տեր Շահե քին. Հայրապետյան
Տեր Անուշավան քին. Կոշեցյան
Տեր Եսայի քին. Արթենյան

ԶՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
Տեր Գրիգոր քին. Գրիգորյան (հոգևոր հովիվ)
Տեր Հայկազուն քին. Մկրտչյան
Տեր Վահան քին. Առաքելյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ (Կոնդ)
Տեր Տիրայր ավգ. քին. Սահիրաղյան (հոգևոր հովիվ)
Տեր Ավետիս ավգ. քին. Դանիելյան
Տեր Դանիել քին. Բաղումյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Նորագավիթ)
Տեր Ղուկաս քին. Բալայան (հոգևոր հովիվ)
Տեր Մյուռոն ավգ. քին. Ադամյան

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Մալաթիա)
Տեր Տիրան ավգ. քին. Առուշանյան (հոգևոր հովիվ)
Տեր Մկրտիչ ավգ. քին. Թովմասյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նորք Մարաշ)
Տեր Զաքարիա քին. Ավետիսյան (հոգևոր հովիվ)
Տեր Թովմա քին. Անդրեասյան
Տեր Զգոն քին. Աբրահամյան

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
Տեր Զենոն քին. Բարսեղյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Քանաքեռ)
Տեր Շմավոն քին. Ղևոնդյան (հոգևոր հովիվ)
Տեր Գաբրիել քին. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ՄԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորք)
Տեր Նորայր ավգ. քին Բաղդասարյան (հոգևոր հովիվ)
Տեր Վարդան ավգ. քին. Մկրտչյան
Տեր Կարապետ քին. Կարապետյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Դավթաշեն)
Տեր Խորեն քին. Մարուքյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ (Ներքին Չարբախ)
Տեր Հրաչյա քին. Գյոզալյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ (ՀԱԹ)
Տեր Վարդան քին. Գափոյան (հոգևոր հովիվ)
Տեր Միքայել քին. Նուրիջանյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Ավան)
Տեր Հարություն քին. Ավագյան (հոգևոր հովիվ)

ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔ
Տեր Բաբկեն քին. Հայրապետյան (հոգևոր հովիվ)
Տեր Պարթև քին. Մուրադյան

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ
Տեր Զգոն քին Աբրահամյան (հոգևոր հովիվ)

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Նուբարաշեն)
Տեր Բարդուղիմեոս քին. Հակոբյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորքի 1-ին զանգված)
Տեր Աշոտ քին. Սաֆարյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Եռաբլուր պանթեոն)
Տեր Զարեհ քին. Աշուրյան

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ (Վերին Շենգավիթ)
Տեր Զարեհ քին. Աշուրյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Մրգավան)
Տեր Պարգև քին. Պալգէորգեան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ (Բյուրական)
Տեր Ղազար քին. Պետրոսյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Արարատ)
Տեր Դավիթ քին. Սահակյան (հոգևոր հովիվ)
Տեր Եզնիկ քին. Մալխասյան

ՍՈՒՐԲ ՄԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ (Արգավանդ)
Տեր Գրիգոր քին. Հովհաննիսյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Վերին Արտաշատ)
Տեր Դավիթ քին. Կյուրեղյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ (Ներքին Դվին)
Տեր Եղիշե քին. Նուրիջանյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Վեդի)
Տեր Հովակիմ քին. Հարությունյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Մարմարաշեն)
Տեր Ղազար քին. Թորոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Դալար)
Տեր Եփրեմ քին. Հարությունյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Արևշատ)
Տեր Հովսեփ քին. Սարգսյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Կանաչուտ)
Տեր Երվանդ քին. Բաբայան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Շահումյան)
Տեր Դերենիկ քին. Միքայելյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Մասիս)
Տեր Եզնիկ քին. Մարդիրյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նորաբաց)
Տեր Մարտիրոս ավգ. քին. Ավետիսյան
(հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ (Արտաշատ)
Տեր Թաթուլ քին. Գասպարյան (հոգևոր հովիվ)
Տեր Երվանդ քին. Բաբայան

ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ (Մասիս)
Տեր Արարատ քին. Օրդոյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Բուրաստան)
Տեր Ղազար քին. Թորոսյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԴԱՎԻԹ ԵԿԵՂԵՑԻ (Գետազատ)
Տեր Սեդրակ քին. Աղասյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Դաշտավան)
Տեր Աբրահամ քին. Մարտիրոսյան
(հոգևոր հովիվ)

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս ԿՃոյանի օրհնությամբ Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցում արդեն մի քանի տարի է, ինչ գործում է սիրիահայերի համայնքը: Համայնքի ներկայացուցիչների համար ամեն ուրբաթ արևմտահայերենով քարոզխոսություն է անցկացվում: Կազմակերպվում են նաև ուխտագնացություններ, ազգային պարերին նվիրված միջոցառումներ, մշակութապահպանմանը նպաստող այլ իրադարձություններ:
Համայնքում ընդգրկված է շուրջ 120 ընտանիք:

ԽՈՒԼԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքում գործում է մնջախաղի թատրոն-ստուդիա: Առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում կիրակնօրյա և տոնական Սբ. Պատարագները թարգմանվում են ժեստերի լեզվով: Համայնքն ունի 42 անդամ, 1 թարգմանիչ, 1 հոգևոր սպասավոր:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համակարգում է թեմի կիրակնօրյա դպրոցների գործունեությունը՝ վերահսկելով այդ կրթօջախների ուսումնական գործընթացը:

Կիրակնօրյա դպրոցների թիվը՝ 14
Ներգրավված երեխաների քանակը՝ 1018
Ուսուցիչների քանակը՝ 18

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՀԹ գրադարանը հիմնադրվել է 1998թ.-ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այն հոգևոր գրականությունից բացի ունի նաև պատմական, աշխարհագրական, գրական-գեղարվեստական, ինչպես նաև՝ արվեստագիտական, ճարտարապետական, մատենագիտական-տեղեկատվական գրականություն: Գրադարանն ունի 551 ընթերցող, 5000 միավոր գիրք:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Համակարգում է թեմական ու համայնքային բարեգործական ծրագրերը, կազմակերպում է սոցիալական տարբեր միջոցառումներ, համագործակցում է տեղական և միջազգային կառույցների հետ:

ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿ

Նյութական օգնություն է տրամադրում թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող 18 տարեկան միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ շուրջ 13.000 երեխաների:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2019թ. հայաստանյան ԶԼՄ-ում հրապարակվել է շուրջ 143 նյութ, որոնք լուսաբանել են Արարատյան Հայրապետական թեմի կողմից կազմակերպված միջոցառումները, հոգևորականների և երիտասարդաց միությունների անդամների մասնակցությամբ ասուլիսները: Հրապարակումների զգալի մասը վերաբերել է Սբ. Սարգսի տոնի առթիվ թեմի կողմից կազմակերպված միջոցառումներին՝

- Սահմանային գծում ծառայության ընթացքում առավել աչքի ընկած զինվորների պարգևատրում,
- Սբ. Պատարագ,
- Քայլերթ,
- Տոնական համերգ:

2019թ. Սբ. Սարգսի տոնի ու տոնակատարությունների մասին Տեղեկատվական բաժնի նախաձեռնությամբ պատրաստվել է տեսաֆիլմ:

Եկեղեցական տոների առթիվ թեմի քահանաները մասնակցել են տարբեր լրատվամիջոցների հեռուստահաղորդումներին, հիմնականում առավոտյան ծրագրերին: Ամենաակտիվ մասնակցությունը եղել է Սբ. Սարգսի և Սբ. Հարության տոների առթիվ: Տարվա ընթացքում թեմի հոգևորականները մասնակցել են 15 ասուլիսի:

Տարբեր լրատվամիջոցներ մեր կայքի ու ֆեյսբուքյան էջի նյութերից շուրջ 40 նյութ վերահրապարակել են իրենց կայքերում: ԶԼՄ-ին հատկապես հետաքրքրում են հոգևոր թեմաներով նյութերը խորհուրդների ու ծեսերի, բարեպաշտական սովորությունների մեկնությունները, հարցազրույցները:

2018թ.–ին թեմում հիմնադրվել և 2019թ.-ին հաջողությամբ իր գործունեությունը շարունակել է ԹԵՄ TV ինտերնետային հեռուստաալիքը: Հեռուստաալիքն ունի հետևյալ հաղորդաշարերը՝

- «Մանկունք»
- «Աստծո կամքը»
- «Քարոզներ»
- «Տերունական օր»
- «Եվ Հիսուսն ասաց»
- «Թեմական կյանք»
- «Հոգևոր զրույցներ»
- «Հարցեր քահանայից»
- «Կենաց ծառ»:

2019թ.-ին շարունակվել է Հանրային հեռուստաընկերության հետ համագործակցությունը՝ «Հայրենեան» հեռուստահաղորդման շրջանակում: Թեմի քահանաները ներկայացրել են Հայ եկեղեցու վարդապետությունը, ծիսական կյանքը, խորհուրդները, հայկական մշակույթի առանձնահատկությունները:

2019թ. «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում շարունակվել է հեռարձակվել ամենշաբաթյա «Ես կամ …» հաղորդաշարը, որը վարում է Տեր Շահե քահանա Հայրապետյանը:

Ռադիոհաղորդումներ

Հայաստանի Հանրային ռադիոյով 2019թ. շաբաթական մեկ անգամ պարբերականությամբ շարունակվել են եթեր են հեռարձակվել «Շողակն Արարատյան» ու «Մանանա» մանկապատանեական ռադիոհաղորդումները:

2019թ. ընթացքում հեռարձակվել է «Շողակն Արարատյանի» 48 հաղորդում, որոնք ունեն հոգևոր - մշակութային ուղղվածություն: Ծրագիրը պարբերաբար անդրադառնում է եկեղեցական տոներին ու թեմում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: 2019-ի ընթացքում մեծ տեղ է հատկացվել նաև հայկական մշակույթին ու պատմությանը վերաբերող թեմաներին: Հյուրընկալվել են թեմի հոգևորականները, պատմաբաններ, ազգագրագետներ ու մշակութային գործիչներ:

«Շողակն Արարատյանի» տեսագրությունները հրապարակվել են նաև ԹԵՄ TV ինտերնետային հեռուստաալիքի YouTube ու Facebook սոցիալական ցանցերում:

«Մանանա» մանկական ծրագիրը երեխաների ամենասիրելի հաղորդումներից է: Այն հիմնականում ներկայացնում է ավետարանական հետաքրքրաշարժ պատմություններ, որոնք մատուցվում են հեքիաթների ու առակների ձևով՝ մատաղ սերնդի միտքն ու հոգին կրթելով քրիստոնեական առաքինությունների, ազգային ավանդույթների, սիրո, գթասրտության, բարության ոգով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԷՋ

Տեղեկատվական ու քարոզչական աշխատանքն ամբողջովին արտացոլվում է թեմի պաշտոնական կայքում՝ www.qahana.am և սոցիալական ցանցերում՝ ֆեյսբուքյան Qahana.am, ինստագրամյան @Qahana.am_aht, Թվիթերյան @Araratyan_tem էջերում:

Ֆեյսբուքյան Qahana.am էջն ունի 78647 հետևորդ,
Ինստագրամյան @Qahana.am_aht էջն ունի 2468 հետևորդ,
Թվիթերյան @Araratyan_tem էջն ունի 560 հետևորդ,
www.qahana.am կայքում գրանցվել է 260,917 այցելություն և 1,972,501 էջի դիտում:

«ՇՈՂԱԿՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ» ԱՄՍԱԹԵՐԹ

2019թ.-ին լույս է տեսել «Շողակն Արարատյան» ամսաթերթի 13 համար, այդ թվում՝ 12 ընթացիկ և 1 տոնական համար, յուրաքանչյուրը 1000 օրինակով: Թերթին թղթակցել են մշակութային գործիչներ, բանասիրական գիտությունների թեկնածուներ, պատմական գիտությունների թեկնածուներ, թանգարանների գիտաշխատողներ, լրագրողներ: Թերթում ավելացել են «Մի լուսանկարի պատմություն», «Մենք՝ վարդանանք», «Հոգևոր անդաստան», «Մելիքսեդեկի կոչումը», «Հոգևոր խրատանի», «Գրապանակ», «Թեմական կյանք», «Մեկը՝ տասներկուսից», «Շառավիղներ», խորագրերը: 2019թ. շարունակել է ակտիվ գործել նաև «Շողակն Արարատյան»-ֆեյսբուքյան էջը, որտեղ ամենօրյա գրառումներ են կատարվում հայրաբանությունից, Աստվածաշնչից, սրբերի վարքից, ինչպես նաև թերթում տպագրված նյութերից: Էջի հետևորդների քանակը ավելի քան 6500 է:

ՀԵԵՄ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2019թ.-ին կենտրոնում հաջողությամբ շարունակվել են կազմակերպվել հետևյալ դասընթացները.

- Անգլերեն հանրային խոսք – Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և ԱՀԹ ուսումնական կենտրոնի համագործակցությամբ, շուրջ 24 մասնակիցների համար:
- Սրբանկարչություն – շուրջ 10 մասնակիցների համար, շաբաթական 2 օր հաճախականությամբ և 3 ժամ տևողությամբ:
- Ամառային դպրոց – շուրջ 18 մասնակիցների համար ուսուցանվել է հայոց լեզու, գրականություն, օտար լեզուներ, հոգևոր դաս, ֆիզիկական պատրաստություն, երգ ու պար, նկարչություն, անցկացվել են ընթերցանության և հոգեբանության ժամեր:
- Կիրակնօրյա դպրոց – շուրջ 15 երեխաների համար:

ՀՈԳԵՎՈՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմի համայնքներում հովվական գործունեության ամենակարևոր հանգրվաններից են դպրոցները, մանկապարտեզները, մանկատները և ծերանոցները, քրեակատարողական հիմնարկները և դատապարտյալների հիվանդանոցը: Հոգևոր և ազգային տոների առթիվ՝ թեմի քահանա հայրերը ինչպես իրենք են մասնակցել նշյալ հաստատություններում կազմակերպված միջոցառումներին, այնպես էլ անձամբ են նախաձեռնել բազմաթիվ հանդիպումներ և միջոցառումներ:
Ընդհանուր առմամբ այցելություններ են կատարվել.

- Համայնքային դպրոցներ
- Մանկապարտեզներ
- 19 այլ ուսումնական ու մշակութային կենտրոններ
- 39 ծերանոց, մանկատուն, ՀՕՖ, Հայորդաց տուն
- ՔԿՀ և դատապարտյալների հիվանդանոց:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատյան Հայրապետական թեմում 2019թ.-ին իրականացվել է 214 ուխտագնացություն, որին ընդհանուր թվով մասնակցել է 7398 մարդ:

Ուխտագնացությունները կատարվել են հետևյալ ուղղություններով.

- Արցախ՝ 7
- Արևմտյան Հայաստան՝ 3
- Երուսաղեմ՝ 1
- ՀՀ՝ 201
- Վրաստան՝ 2:

ՃԱՄԲԱՐՆԵՐ

2019թ.-ի ամռանը թեմի մի շարք համայնքներում նախաձեռնվել և կազմակերպվել են հոգևոր ճամբարներ՝ մասնավորապես հետևյալ եկեղեցիներին կից համայքներում.

- Արարատի մարզի Սբ. Հակոբ
- Արգավանդի Սբ. Սարգիս
- Արևշատի Սբ. Մարիամ Աստվածածին
- Դաշտավանի Սբ. Աստվածածին
- Կաթողիկե Սբ. Աստվածածին և Սբ. Աննա
- Մրգավանի Սբ. Հակոբ:

ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՀԹ բոլոր եկեղեցիներում 2019 թվականին կազմակերպվել է Հսկման կարգ, Սուրբ Գրքի սերտողություն, քարոզխոսություն: Իրականացվել է 1206 հոգևոր-քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է ընդհանուր առմամբ 38.255 հավատացյալ:

Հոգևոր քարոզչություն է իրականացվել համայնքների մշակութային, կրթական, հասարակական կառույցներում:
Կազմակերպվել է 423 հոգևոր-քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է ընդհանուր առմամբ 24.351 հավատացյալ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

2019թ. հունվարի 5-ին ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում մատուցվեց Սբ. Ծննդյան ճրագալույցի Սբ. Պատարագ: Հավարտ Սբ. Պատարագի՝ Նավասարդ Սրբազանի նախագահությամբ, ԱՀԹ առաջնորդարանում կատարվեց Տնօրինեքի կարգ: Այնուհետև «Վարք հայոց» ազգագրական երգի-պարի խմբի ելույթով ամփոփվեց տոնական երեկոն:
Հունվարի 6-ին՝ Քրիստոսի Սբ. Ծննդյան ու Աստվածահայտնության տոնի առթիվ, ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը տոնական Սբ. Պատարագ մատուցեց առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում: Սբ. Պատարագի ավարտին կատարվեց Ջրօրհնեքի կարգ:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Թեմի եկեղեցիներում տոնական միջոցառումներով և նորապսակների օրհնության կարգով նշվեց Տեառնընդառաջի տոնը:

Արաբկիրի նորակառույց եկեղեցու բակում, տոնական միջոցառման շրջանակներում, Արաբկիրի հայորդյաց տան սաները ցուցադրեցին իրենց ձեռքի աշխատանքները:

Նոր Նորքի Սբ. Սարգիս եկեղեցում ավանդական գեղեցիկ միջոցառմանը մասնակից դարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդաց տան սաները և ՀԲԸՄ 3 խմբերը՝ դհոլահարների խումբը, «Նարեկ» պարային համույթը, «Հայկազունք» ազգագրական երգի-պարի ումբը:

Ջորավոր Սբ. Աստվածածին եկեղեցում՝ Տեառնընդառաջի ավանդական խարույկի շուրջ, «Թամզարա» և «Տոնական» ազգային պարերով հանդես եկան Կենտրոն վարչական շրջանի ենթակայության ներքո գործող «Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոն»-ի «Արմենիա» պարային համույթի սաները: Եկեղեցու տիկնանց միությունը կազմակերպել էր ցուցահանդես-վաճառք, որտեղ ներկայացրել էին իրենց կողմից պատրաստված՝ տոնի խորհրդանիշ-հուշանվերները:

Սբ. Երրորդություն եկեղեցու բակում ելույթ ունեցան Ալ. Աճեմյանի անվան և Կ. Օրբելյանի անվան երաժշտական և արվեստի դպրոցների սաները:

Նուբարաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում ելույթ ունեցան մարզամշակույթային կենտրոնի սաները:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Արարատյան Հայրապետական թեմում փետրվարի 16-ին՝ Սբ. Սարգսի տոնի առթիվ, հոգևոր արարողություններին զուգահեռ իրականացվել են երիտասարդներին ուղղված բազմաթիվ ծրագրեր՝ սիրո տոնը լցնելով հայկական երանգներով ու տրամադրությամբ: Առանձնահատուկ կարևորվել են Հայոց բանակին ու հայ զինվորին նվիրված ծրագրերը:
Տոնի առթիվ Սբ. Պատարագ մատուցվեց թեմի՝ Սբ. Սարգսի անունը կրող եկեղեցիներում՝ Առաջնորդանիստ, Նոր Նորքի, Արգավանդի: Խորհրդային տարիներից ի վեր առաջին անգամ Սբ. Պատարագ է մատուցվել նաև Գետազատի Սբ. Սարգիս խոնարհված եկեղեցում: Երիտասարդների օրհնության կարգ է կատարվել թեմի բոլոր եկեղեցիներում:

Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանից 17-րդ դարում Սբ. Սարգիս եկեղեցում ***ընդօրինակված ձեռագիր Ավետարանը*** և ***Սբ. Սարգսի աջը*** բերվել են Առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցի: Ավետարանը Սբ. Խորանի վրա է մնացել Սբ. Պատարագի ողջ ընթացքում, իսկ հավարտ Սբ. Պատարագի՝ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի նախագահությամբ, սուրբ մասունքով կատարվել է **զինվորների ու երիտասարդների օրհնության կարգ**: Ավետարանը և Սբ. Աջը եկեղեցում են մնացել մինչև երեկոյան ժամերգությունը:

2019 թ.-ին 4-րդ անգամ ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ՝ տեղի է ունեցել ծառայության ընթացքում առավել **ապրի ընկած 20 զինծառայողների** պարգևատրման արարողությունը: Սբ. Սարգիս զորավարի խորհրդանշական խաչերի և դրամական պարգևների արժանացած զինվորների ցուցակը, որն ընդգրկում էր ամբողջ Հայաստանը և Արցախը, տրամադրել է ՀՀ ՊՆ-ն: Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԶՈՒ ԳՇ, ՀՀ ՊՆ բարձրաստիճան զինվորականներ, զինվորներ, նրանց ծնողներն ու հարազատները: ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի անունից պարգևատրվող զինվորներին տրվեց 7-օրյա արձակուրդ:

Տեղի ունեցավ «**Երիտասարդների օր, կամ անցկացնենք ազգային սիրո տոնը միասին**» խորագրով Սբ. Սարգսին նվիրված երիտասարդական համերգ-ցերեկույթ **ՖԻԿԱ-ի հետ**: Ծրագրում ներառված էր երիտասարդների օրհնություն, տոնի խորհուրդ, սիրո խոստովանություններ, աղե բլիթներ, գեղեցիկ մրցանակներ, խաղեր, երգ ու պար:

«Բուկինիստ» գրախանութների ցանցը և ԱՀԹ-ն սիրահարների տոնի առթիվ իրականացրել են «**Իմ գաղտնի գրքաՍԵՐ. սիրո խոստովանություն գրքով**» միջոցառում-ակցիան: Բազմաթիվ մարդիկ սիրելիներին իրենց սերն ու ուշադրությունը փոխանցեցին գրքով. այն ձեռք բերելով գրախանութում՝ հատուկ էջանշանի վրա թողել էին իրենց սիրելիի կոնտակտային տվյալները: Վերջիններս հրավիրել էին գրախանութ՝ ստանալու իրենց նվերները՝ առանց նվիրողի անձը բացահայտելու: Գրքով սիրո խոստովանություններ էին արվել նաև զինվորներին, ովքեր, ի դեպ, նոր էին վերադարձել բանակից: Գիրք նվեր ստացողների համար ԱՀԹ-ն, «Բուկինիստ»ն ու ծրագրի գործընկերները պատրաստել էին նվերներ, Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնն ու Համազգային թատրոնը՝ ներկայացումների տոմսեր, «Գուրմե-Դուրմե»-ն՝ համեղ շոկոլադներ, «Լոֆթ»-ը՝ նվեր-փաթեթներ, «Մոսկվա» կինոթատրոնը՝ ֆիլմերի տոմսեր:

«Լոֆթ»-ում տեղի է ունեցել աղաբլիթների ու փոխինձի հյուրասիրություն:

Երևանի Կենտրոն վարչական շրջանի նախաձեռնությամբ՝ ***Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցու*** բակում տեղի է ունեցել տոնախմբություն՝ վարչական շրջանի մշակույթի վարչության երգի-պարի խմբակների սաների մասնակցությամբ:

ԱՀԹ-ի, Աշխարհի հայ նկարիչների և Հայաստանի նկարիչների միությունների նախաձեռնությամբ Հայաստանի նկարիչների տանը բացվեց «Սբ. Սարգիս» **ցուցահանդես-մրցույթը**, որի համար սահմանվել էր 4 անվանակարգ՝ գեղանկար, գրաֆիկա, քանդակ, դեկորատիվ-կիրառական արվեստ: Մրցույթին ներկայացված էին շուրջ 40 նկարչի 100-ից ավելի աշխատանքներ: Մանագիտական ժյուրիի ընտրությամբ մրցանակների արժանացան 11 մասնակից՝ 4 առաջին, 4 երկրորդ և 3 երրորդ մրցանակ: 2-րդ և 3-րդ տեղեր գրավածներն արժանացան պատվոգրերի ու գրքերի: 1-ին մրցանակին արժանացած ստեղծագործողները բացի պատվոգրերից Նավասարդ Սրբազանի կողմից արժանացան նաև դրամական պարգևների: Հայաստանի նկարիչների միության կողմից սահմանված խրախուսական մրցանակների արժանացավ 3 մասնակից:

Փետրվարի 16-ին առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցու բակից, հոգևորականների առաջնորդությամբ, երիտասարդները, Սբ. Սարգսի կերպարը խորհրդանշող ձիավորի ու թմբկահարների ուղեկցությամբ, քայլեցին դեպի Սիրահարների պուրակ: **Խաչերթին** մասնակցեցին ԱՀԹ երիտասարդական բոլոր կառույցները, սկաուտները, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի, Խանփերյանցի անվան ավիացիոն ինստիտուտի, ՀՀ ոստիկանական կրթահամալիրի, Երևանի մի շարք բուհերի ուսանողներ, Երևանի վարչական շրջանների ներկայացուցիչները:
Սիրահարների պուրակում տեղի ունեցավ Գարիկի և Սոնայի բացօթյա **մենահամերգը**:

Նոր Նորքի Սբ. Սարգիս եկեղեցում Սբ. Պատարագի ավարտին կատարվեց երիտասարդների օրհնության կարգ: Այնուհետև, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ Նոր Նորքի Հայորդյաց տան սաների մասնակցությամբ, եկեղեցու բակում տեղի ունեցավ տոնական մեծ համերգ:

Արգավանդի Սբ. Սարգիս եկեղեցի էր բերվել 21-րդ դարում ընդօրինակված ձեռագիր Ավետարանը: Սբ. Պատարագին հաջորդեց երիտասարդների օրհնության կարգը, որից անմիջապես հետո, սկսվեց տոնական համերգ, որին մասնակցում էին «Ջիվանու» աշուղական դպրոցի սաները: Տեղի ունեցավ նաև Սբ. Սարգսի վարքին ու տոնին նվիրված վիկտորինա, և հարցերին ճիշտ պատասխանողներին տրվեցին նվերներ, որոնք տրամադրել էր ԱՀԹ-ն: Միջոցառումն ավարտվեց սիրո ճաշով:

Սբ. Սարգսի տոնի կազմակերպման հարցում զգալի էր Երևանի քաղաքապետարանի աջակցությունը, քանի որ Երևանի վարչական շրջաններում տոնի շրջանակում կազմակերպվեցին բազմաթիվ ծրագրեր ու համերգներ:
Տոնին միացել էին նաև Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնն ու Համազգային թատրոնը, «Գուրմե-Դուրմե»-ն, «Մոսկվա» կինոթատրոնն ու «Կինոպարկ»-ը՝ ֆիլմերի տոմսերով: Երևան մոլը և Ռիո մոլը, Սբ. Սարգսի տոնի կապակցությամբ նախաձեռնել էին մի շարք ակցիաներ մեր համաքաղաքացիների համար: Ամեն տարի սեփական նախաձեռնությամբ «Վիվասել-ՄՏՍ»-ը տարբեր ակցիաներ է հայտարարել իր հաճախորդների համար, իսկ «UCOM»-ը՝ կարճ հաղորդագրությունների միջոցով շնորհավորել իր բաժանորդներին:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Հայկական տոները նշելու ավանդույթները վերականգնելու և դրանց ժողովրդական շունչ հաղորդելու նպատակի շուրջ համախմբվել են ԱՀԹ-ն և Երևանի քաղաքապետարանը: Մինչ Բուն Բարեկենդանի տոնը՝ մարտի 3-ը, Երևանի բոլոր վարչական շրջաններում կազմակերպվել են տոնական միջոցառումներ՝ ԱՀԹ երիտասարդաց միությունների նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ:

Փետրվարի 19-ին ***Էրեբունի վարչական շրջանում*** միջոցառման ընթացքում ներկայացվեց երեխաների կողմից բեմադրված Հ. Թումանյանի «Բարեկենդանը» հեքիաթը: Այնուհետև իրենց երգ ու պարով հանդես եկան մի շարք պարային և երաժշտական խմբեր՝ «Էրիկ» դհոլի և «Մուշ» ստուդիաները, ինչպես նաև «Հայաստան» պարային անսամբլը: Սրահում ներկայացված էր նաև Բուն Բարեկենդանին նվիրված ձեռքի աշխատանքների ցուցահանդես:

Փետրվարի 19-ին ***Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում*** միջոցառման ընթացքում ներկայացվեց երեխաների կողմից բեմադրված Հ. Թումանյանի «Բարեկենդանը» հեքիաթը: Այնուհետև իրենց երգ ու պարով հանդես եկան «Բելլա» պարային ստուդիան և Զեյթուն մշակութային կենտրոնի «Հայասա» թատերախումբը:

Փետրվարի 20-ին ***Սուրբ Երրորդություն եկեղեցում*** գեղեցիկ տոնն էլ ավելի հետաքրքիր դարձրին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մշակութային օջախների սաները: Եկեղեցու բակը գունագեղ սեղաններով զարդարել էին Կ. Օրբելյանի անվան արվեստի դպրոցի սաները: Իրենց պարով բոլորին հիացրին «Միլեն» շոու-բալետի սաները, իսկ Ալ. Աճեմյանի անվան երաժշտական դպրոցն ապահովեց ազգային շունչը՝ ժողովրդական երգերի տեսքով:

Փետրվարի 21-ին ***Կենտրոն վարչական շրջանի*** Բ. Կանաչյանի անվան արվեստի դպրոցում ներկայացվեցին Կանաչյան արվեստի դպրոցի սաների կողմից բեմադրված թումանյանական թատերախաղեր՝ «Մի կաթիլ մեղրը», «Անբան հուռին» և «Բարեկենդանը»: Այնուհետև իրենց երգ ու պարով հանդես եկան նույն դպրոցի երեխաները:

Փետրվարի 22-ին ***Աջափնյակ վարչական շրջանում*** տեղի ունեցող միջոցառման ընթացքում ներկայացվեց «Վասպուրիկ» մարիոնետների թատրոնի սաների կողմից բեմադրված Հ. Թումանյանի «Անբան հուռին» հեքիաթը: Այնուհետև իրենց երգ ու պարով հանդես եկան «Ֆորս» պարային ստուդիան, «Մարաթուկ» ազգագրական երգ ու պարի համույթը, Անահիտ Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոցի «Հայկ» դհոլահարների խումբը, «Զարթոնք» պարային ստուդիան, իսկ «Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոնի սաները ներկայացրին իրենց ձեռքի աշխատանքները:

Փետրվարի 23-ին՝ Բարեկենդանի տոնի առթիվ, ***Նոր Նորքի*** Սբ. Աստվածածին եկեղեցու բակում կազմակերպված միջոցառումն ուղեկցվեց ազգային երգ ու պարով՝ ներկաներին հաղորդակից դարձնելով մեր հոգևոր-մշակութային արժեքներին:

Փետրվարի 25-ին ***Ավան վարչական շրջանի*** ավելի քան 7 մանկապարտեզներում տեղի ունեցան Բուն Բարեկենդանին նվիրված միջոցառումներ, որտեղ փոքրիկները հասցրին մեկը մյուսի ետևից զարմացնել ներկաներին՝ իրենց բեմական գեղեցիկ խաղերով:

Փետրվարի 26-ին ***Դավթաշենի*** Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում իրենց երգ ու պարով հանդես եկան Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոցի շնորհալի սաները: Երաժշտական կատարումները զուգակցված էին թեմատիկ ցուցահանդեսով, ազգային ուտեստներով, ձեռքի աշխատանքներ ներկայացնող տաղավարներով: Տոնախմբությանն իրենց ազգային ուտեստների տաղավարներով մասնակցում էին վարչական շրջանի մանկապարտեզները:

Փետրվարի 28-ին ***Արաբկիր համայնքի*** նորակառույց եկեղեցու դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Բուն Բարեկենդանին: Միջոցառման ժամանակ ելույթ ունեցան Արաբկիրի եկեղեցու Կիրակնօրյա դպրոցի սաները, ինչպես նաև Արաբկիր վարչական շրջանի մի շարք դպրոցների տաղանդավոր աշակերտներ, ովքեր իրենց երգ ու պարով բարձր տրամադրություն հաղորդեցին հանդիսատեսին:
ՀՕՄ-ի նախաձեռնությամբ միջոցառման մասնակիցներին տրվեցին Բուն Բարեկենդանը խորհրդանշող նվերներ:

Մարտի 1-ին ***Շենգավիթ վարչական շրջանում*** միջոցառումը տեղի ունեցավ Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում, որտեղ տոնակատարությունը մեկնարկեց «Real dance» պարային ստուդիայի սաների ելույթով, այնուհետև ներկաները ականատես եղան «Արտիստ» թատերական ստուդիայի կողմից Հով. Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթի ժամանակակից բեմադրմանը: Հանդես եկան նաև Լուսինե Զաքարյանի սաները, իսկ Սամվել Գալստյանի սաները ներկայացան ժողովրդական երգերի գեղեցիկ կատարմամբ: Էդմոն Գալստյանի սաների կողմից բեմադրվել էր «Բարեկենդանը» հեքիաթը: Միջոցառումը եզրափակեցին Գոռ Մկրտչյանի սաները՝ իրենց ազգային պարերով:

Մարտի 1-ին ***Նուբարաշեն թաղային համայնքի*** մարզամշակութային կենտրոնում տեղի ունեցած Բարեկենդանի միջոցառմանն իրենց մասնակցությունն էին բերել Ղևոնդ Ալիշանի անվան համար 95 միջն. դպրոցի աշակերտները և աշխատակազմը: Երեխաների մասնակցությամբ բեմադրվել էր Հովի. Թումանյանի «Բարեկենդանը» հեքիաթը, այնուհետև ցուցադրվեց լավաշի թխման արարողությունը՝ Նուբարաշենի մանկապարտեզի փոքրիկների մասնակցությամբ: Իրենց գեղեցիկ պարերով հանդես եկան «Նուբար», «Էլբի» և «Իքսինա» պարային ստուդիաների սաները:

Մարտի 3-ին ***Դաշտավանի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու*** բակում երիտասարդաց միության և համայնքի բնակիչների կողմից կազմակերպված միջոցառման նպատակը ազգային պարերի և Բարեկենդանին վերաբերող երգերի ուսուցումն էր, ազգային խաղերը:

Մարտի 3-ին՝ Բուն Բարեկենդանի տոնի առթիվ, թեմի երիտասարդաց միությունները կազմակերպել էին միջոցառում, որին մասնակցում էին ոչ միայն թեմի համայնքների անդամներն, այլ նաև Երևանի բոլոր վարչական շրջանների մշակույթի կենտրոնների երգ ու պարի, ազգային նվագարանների խմբերը: Ազգային նվագարանների, թմբկահարների, դհոլահարների խմբերի ուղեկցությամբ ու ազգային երգերի կատարումներով բարեկենդանյան միջոցառումների շարքը մեկնարկեց ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցու բակում:
Քաջ Նազարն ու Ուստիանն էլ իրենց հերթին մեծ ուրախություն էին պարգևել ներկաներին, իրենց կերպարներով ապահովել էին օրվա տրամադրությունը և իրենց հատուկ հումորով էլ մեկնաբանեցին օրվա խորհուրդը:

Մարտի 4-ին ***Մասիսի Սբ. Գևորգ եկեղեցում*** մեկնարկեց ժողովրդական տոնահանդեսը Սբ. Գևորգ եկեղեցուց՝ Ֆրանկոֆոնիայի այգի: Միջոցառումն իր ներկայությամբ պատվել էր Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ջոնաթան Լաքոտը՝ մի խումբ բարեկամներով, ովքեր ներկաներին պատմեցին տոնի հետ կապված ֆրանսիական ավանդույթները: Միջոցառումների շարքը կազմակերպվել էր եկեղեցու երիտասարդաց միության և Մասիսի երիտասարդական կենտրոնի համատեղ ջանքերով: Տոնահանդեսին ակտիվ մասնակցություն ունեցան Մասիսի հանրակրթական և երաժշտական դպրոցները, Գյուղատնտեսական քոլեջը, «Սիրոն» թատերախումբը: Ժողովրդական պարերով տոնը զարդարեց «Կարին» պարի համույթը:

ՄԻՋԻՆՔ

Մարտի 27-ին ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ թեմի երիտասարդական միություններն առաջնորդարանում նշեցին Միջինքը՝ պահքի ավանդական հայկական ուտեստների հյուրասիրությամբ, երգուպարով: Միջոցառումը սկսվեց Տերունական աղոթքով: Նավասարդ Սրբազանն իր գնահատանքը բերեց երիտասարդներին և թեմի երիտասարդական կառույցներին, Երևանի քաղաքապետարանի ու վարչական շրջանի աշխատակիցներին՝ Սբ. Սարգսի ու Բուն Բարեկենդանի տոների առթիվ համատեղ իրականացված ծրագրերի համար: Ապա Սրբազան հայրը շնորհակալագրեր ու պատվոգրեր հանձնեց Երևանի վարչական շրջանների կրթության, մշակույթի և սպորտի բաժին պետերին, «Վան» ու «Վարք» հայոց ազգագրական խմբերին: Պատվոգրերի արժանացան Շենգավիթ, Աջափնյակ ու Նուբարաշեն վարչական շրջանները, իսկ Ավան վարչական շրջանն արժանացավ հատուկ գավաթի՝ Բուն Բարեկենդանի լավագույն միջոցառումը կազմակերպելու համար: Երիտասարդաց միության անդամները միջինքի ուտեստներ հյուրասիրեցին ներկաներին: Երիտասարդները պատրաստել էին նաև Միջինքի զարդ համարվող բաղարջ հացը, որի մեջ մետաղադրամի փոխարեն խաչ էին տեղադրել: Միջինքը տոնի վերածվեց «Վարք հայոց» երգի-պարի ազգագրական խմբի ելույթով:

Նորք-Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցու երիտասարդաց միությունը Միջինքը նշեց «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր այցելությամբ, որտեղ երեխաների համար կազմակերպվել էր միջոցառում՝ ծաղրածուի և հեքիաթի հերոսների մասնակցությամբ:

Արաբկիր համայնքի նորակառույց եկեղեցում կիրակնօրյա դպրոցի սաների մասնակցությամբ նշվեց Միջինքը՝ տոնական համերգով:

Քանաքեռի Սբ. Հակոբ եկեղեցու Տիկնանց միությունը եկեղեցու այցելուներին Միջինքի բաղարջահաց հյուրասիրեց: Միջինքի կերակրատեսակներով հարուստ սեղանը օրհնելուց հետո ներկաներին բաժանվեցին Միջինքի գաթաներ, որոնց մեջ կային տողեր սաղմոսներից:

Արտաշատի Սբ. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու նախաձեռնությամբ Արտաշատի տարածաշրջանային պետական քոլեջում նշվեց Միջինքը, որտեղ ուսանողները դիտեցին ապաշխարության մասին ֆիլմ, ապա հոգևորականի հետ զրույցի ընթացքում ստացան եկեղեցական այս կամ այն թեմայի շուրջ իրենց հուզող հարցերի պատասխանները, ինչին հաջորդեց գաթայի կտրելու արարողությունը:

Ներքին Դվինի Սբ. Հարություն եկեղեցու բակում կազմակերպեց Միջինքի հյուրասիրություն և պահքի ուտեստների մրցույթ: Միջոցառման վերջում իրենց երաժշտական համարներով հանդես եկան Երիտասարդաց միության անդամները:

Մասիսի Սբ. Թադեոս եկեղեցում կազամակերպված միջոցառմանը մասնակցում էին Մասիսի ուսանողական խորհուրդը, երիտասարդաց միության անդամները, մի շարք մանկապարտեզների երեխաներ և համայնքի հավատացյալներ:

Բյուրավանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հյուրընկալել էր իր հովվության Բյուրավան, Ջրաշեն, Հովտաշեն, Լանջազատ, Բարձրաշեն, Դիտակ գյուղերի քրիստոնեական դաստիարակության (կիրակնօրյա) դասընթացների մասնակից քառասունից ավելի երեխաների: Եկեղեցում ընդհանրական աղոթքից և օրհնությունից հետո հոգևոր զրույց տեղի ունեցավ:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդի օրը ԱՀԹ բոլոր եկեղեցիներում Սբ. Պատարագի ավարտին կատարվեց Մանուկների օրհնության կարգ:

Դավթաշենի ***Սրբոց Նահատակաց եկեղեցու*** բակում, Ծաղկազարդի տոնի կապակցությամբ, տեղի ունեցավ կավճանկարչության մրցույթ և տոնական միջոցառում՝ եկեղեցուն կից գործող Հովհան Ոսկեբերանի անվան խմբակի սաների մասնակցությամբ:

Նորագավթի ***Սբ. Գևորգ եկեղեցում*** Ծաղկազարդի տոնին ներկա էին համայնքի դպրոցներից և մանկապարտեզներից սաներ, մանկավարժներ, հավատացյալներ և այլ հյուրեր: Երեխաների համար կազմակերպվել էր կավճանկարչության մրցույթ, կավերի գունազարդում, օրհնված խաչերի նվիրում, իսկ վերջում կատարվեց ուռենու ճյուղերի օրհնություն:

Մալաթիայի ***Սբ. Աստվածածին եկեղեցում*** 50 մանուկների բաժանվեց քաղցրավենիք ու կոնֆետներ:

Նուբարաշենի ***Սրբոց Նահատակաց եկեղեցում*** տոնական Սբ. Պատարագին հաջորդած երեխաների օրհնության կարգից անմիջապես հետո եկեղեցու բակում երեխաների համար տեղի ունեցավ մանկական շոու- ծրագիր:

Մրգավանի ***Սբ. Հակոբ եկեղեցում*** Սբ. Պատարագին հաջորդած՝ մանուկների օրհնության կարգից հետո տեղի ունեցավ Մրգավանի միջնակարգ դպրոցի մի խումբ աշակերտների կողմից բեմադրված ներկայացում՝ նվիրված Ծաղկազարդի խորհրդին:

Ներքին Չարբախի ***Սբ. Խաչ*** և Արարատի մարզի Մարմարաշենի ***Սբ. Գևորգ եկեղեցիներում*** տեղի ունեցավ Ծաղկազարդին նվիրված համերգ և կավճանկարչության մրցույթ:

Մխչյանի ***Սբ. Հովհաննես եկեղեցում,*** հավարտ Սբ. Պատարագի, կատարվեց մանուկների օրհնության կարգ, իսկ եկեղեցու բակում տեղի ունեցավ կավճանկարչության մրցույթ:

Վեդու ***Սբ. Աստվածածին եկեղեցում*** Սբ. Պատարագից հետո կատարվեց մանուկների օրհնության կարգ: Եկեղեցու երիտասարդները կազմակերպել էին Ծաղկազարդի տոնին նվիրված միջոցառում:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Ապրիլի 20-ին ԱՀԹ առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցուց մեկնարկեց «Հարության Ավետիս» խորագրով կանթեղներով երթը, որը նախաձեռնել էին ԱՀԹ երիտասարդաց միությունները: Երթի մասնակիցները Ճրագալույցի Սբ. Պատարագից հետո Սբ. Հարության Ավետիսը մարդկանց փոխանցելով՝ Մ. Մաշտոցի պողոտայով և Ամիրյան փողոցով քայլեցին դեպի Հանրապետության հրապարակ: Մասնակիցները քարե գորգի վրա խաչ կազմեցին՝ ի նշան Քրիստոսի Հրաշափառ Հարության: Քայլերթին միացան ՀՄԸՄ ՀԱԱԿ սկաուտական և տարբեր ՀԿ-ների անդամներ, Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի կուրսանտներ, Խանփերյանցի անվան Ավիացիոն ինստիտուտի սաներ, ուսանողներ և ուսանողական միությունների անդամներ, զինվորներ, ԱԻՆ աշխատակիցներ:

Ապրիլի 21-ին՝ Սուրբ Հարության տոնի առթիվ, ԱՀԹ բոլոր եկեղեցիներում տեղի ունեցան զատկական միջոցառումներ, իսկ երգն ու պարն իրենց մասնակցությամբ ապահովեցին մշակութային տարբեր խմբեր:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ «VILLA MONTESSORI» մանկապարտեզի սաների համար կազմակերպված միջոցառմանը տոնական տրամադրություն հաղորդեցին «Վարք Հայոց» ավանդական երգի-պարի խումբը: Նորագավթի ***Սբ. Գևորգ եկեղեցու*** բակում միջոցառումը սկսվեց մանուկների օրհնության կարգով: Երեխաները հնարավորություն ունեցան հենց եկեղեցու բակում դիտել թատերական ներկայացում: Տոնական բարձր տրամադրությունն ապահովեցին հրավիրված ծաղրածուներն ու մուլտհերոսները: Միջոցառման ընթացքում երեխաները զբաղվեցին կավճանկարչությամբ, մասնակցեցին տարբեր խաղերի, իսկ վերջում օրհնված խաչեր նվեր ստացան:

Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցու և «Արև-երեխաներ» երեխաների առողջության և զարգացման կենտրոնի համատեղ սոցիալական ծրագրերի շրջանակում, ՀԿ-ի սաները երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով «Մուլտերի աշխարհ» մանկական սրճարանում մասնակցեցին տոնական միջոցառման:

Զորավոր ***Սբ. Աստվածածին եկեղեցու*** սոցիալական ծրագրերի շրջանակներում, Էջմիածնի «Հայ միասնության խաչ» բարեգործական մշակութային ՀԿ-ում տեղի ունեցավ տոնական միջոցառում: Էջմիածին քաղաքից և հարակից գյուղերից «Հայ միասնության խաչ»-ի Արվեստաց դպրոց հաճախող 46 հաշմանդամ և 150 անապահով ընտանիքների երեխաներ մասնակից եղան իրենց համար պատրաստված միջոցառման, որ նախաձեռնել և հովանավորել էր Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցու համայնքը: Հնչեց «Հայ միասնության խաչ»-ի օրհներգը, որից հետո կազմակերպության «Մաչանենց» թատրոնի պատանի դերասանները ներկայացրին Հովհաննես Թումանյանի «Կիկոսի մահը» և «Բարեկենդան» հեքիաթները: Արվեստաց դպրոցի սաները ազգային կոլորիտով զարդարուն բակը ողողեցին նաև ազգային երգ ու պարով: Տոնական օրվա հաջորդ նվերը երեխաներին տոնական հյուրասիրությունն էր՝ տոնական տորթը և քաղցր նվերները:

Կաթողիկե Սբ. Աստվածածին և Սբ. Աննա եկեղեցիների համայնքի մի խումբ երիտասարդներ և ծխական խորհրդի անդամներ այցելեցին Խարբերդի մասնագիտացված մանկատուն: Համայնքի ջանքերով երեխաները պարբերաբար բազմաթիվ մշակութային միջոցառումների են մասնակցում. պայմաններ են ստեղծվում, որ երեխաները այցելեն թատրոններ և մշակութային այլ հաստատություններ. որպեսզի ներառվեն հասարակության մեջ և դառնան դրա մի մասնիկը: Երեխաներին բարձր տրամադրություն հաղորդեց ծաղրածուն, ով կազմակերպեց տարբեր խաղեր և աշխուժացրեց մանկատան երեխաների առօրյան: Այցի ընթացքում բաժանվեցին քաղցրավենիք, հիգիենայի անհրաժեշտ պարագաներ, թևնոցներ և սրբապատկերներ:

ՎԱՐԴԱՎԱՌ

Քրիստոսի Պայծառակերպության տոնը նշվեց հուլիսի 21-ին: Արդեն 6 տարի է, ինչ Պայծառակերպության նախատոնակը ԱՀԹ երիտասարդաց միությունների անդամների շնորհիվ համեմվում է Վարդավառը խորհրդանշող խաղիկներով, երգ ու պարով, գեղեցիկ ավանդույթներով: Նախատոնակի սկզբում տոնական քայլերթը մեկնարկեց Առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցու բակից և ձգվեց մինչ Մանկական զբոսայգի, որտեղ էլ շարունակվեց բարձր տրամադրությունը, որն ապահովեցին «Վարք հայոց» և «Վան» ազգագրական երգ ու պարի համույթները: Տոնակատարության ընթացքում երիտասարդաց միությունների անդամները կրակի վրա խնձորներ խորովեցին և հյուրասիրեցին ներկաներին: Պատմական բոլոր ավանդույթներն ու պատմությունները պահպանելով՝ երիտասարդները միջոցառման ժամանակ բաց թողեցին աղավնիներ և իրար վրա ջուր ցողեցին՝ ի նշան ջրհեղեղի ավարտի և Նոյի տապանից դուրս գալու խորհրդի: Միջոցառման ավարտին թեմի երիտասարդները ներկաներին բաժանեցին իրենց ձեռքով պատրաստած քաղցրավենիքները:

Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցում Սբ. Պատարագից հետո տեղի ունեցավ Վարդավառի ուրախ տոնախմբություն, որը կազմակերպել էին եկեղեցու տիկնանց միության անդամները:

Նոր Նորքի ***Սբ. Սարգիս եկեղեցու*** բակում ջրախաղից հետո երիտասարդաց միության անդամներն ազգային երգ ու պարի միջոցով ոգևորեցին ներկաներին:

Ավանի ***Սբ. Աստվածածին եկեղեցու*** բակում կազմակերպված միջոցառումից հետո հարակից այգիներում Երիտասարդաց միության անդամները երեխաների համար կազմակերպեցին ջրախաղ:

Արարատի մարզում Ս. Պատարագից անմիջապես հետո Երիտասարդաց միության անդամների կողմից գրեթե բոլոր եկեղեցիներում կազմակերպվել էին տոնական միջոցառումներ և ջրախաղ:

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆ

Սբ. Աստվածածնի Վերափոխման տոնը Հայ Առաքելական Եկեղեցին նշեց օգոստոսի 18-ին:
Թեմի մի շարք համայնքներում Սբ. Պատարագի և Խաղողօրհնեքի կարգից հետո իրականացվեցին տոնական միջոցառումներ, տեղի ունեցան բարեգործական այցեր և մատուցվեց սիրո ճաշ:

Կաթողիկե Սբ. Աստվածածին և Սբ. Աննա եկեղեցիների բակում Երեկոյան, Կենտրոն վարչական շրջանի նախաձեռնությամբ, «Տարոնցիներ» ազգային երգ ու պարի խումբը հանդես եկավ ազգային պարերով:

Արարատի ***Սբ. Հակոբ եկեղեցու*** բակում կատարվեց ավանդական դարձած մատաղօրհնության կարգ: Վերջում օրհնված խաղողի ողկույզները և մատաղը բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Ներքի Դվինի ***Սբ. Հարություն եկեղեցում*** համայնքի երիտասարդների մասնակցությամբ կազմակերպվեց տոնական միջոցառում՝ ազգային երգ ու պարով և հյուրասիրությամբ:

Ավանի ***Սբ. Աստվածածին եկեղեցու*** բակում վարչական շրջանի աջակցությամբ տեղի ունեցավ տոնական միջոցառում՝ երգի-պարի խմբերի մասնակցությամբ, որից հետո մասնակիցների և հյուրերի համար կազմակերպվեց հյուրասիրություն:

Նորագավթի ***Սբ. Գևորգ*** և Ներքին Չարբախի ***Սբ. Խաչ եկեղեցիներում*** Սբ. Պատարագից հետո օրհնվեց խաղողը, խաղողի հետ նաև՝ տարվա բերքն ու բարիքը, և բաժանվեց ներկաներին: Եկեղեցիների բակերում կազմակերպվեց համերգային ծրագիր: Շրջանի մշակույթի կենտրոնների սաներն ու պարախմբերը, անհատ կատարողներն ու համույթները հանդես եկան ազգային երգերի ու պարերի կատարումներով: Այնուհետև եկեղեցիների բակերում, այգիներում, պուրակներում կազմակերպվեց օրհնված խաղողի և մատաղի հյուրասիրություն: Խաղողօրհնեքի արարողությունից հետո «Շենգավիթ» բժշկական կենտրոնում գտնվող մանուկները ստացան հոգևորականի օրհնություն:

Աստվածամոր Վերափոխման տոնի կապակցությամբ Նոր Նորքի ***Սբ. Աստվածածին եկեղեցու*** տիկնանց միության «Նռանե» երգչախումբը (խմբավար՝ Նունե Մինասյան) 1-ին անգամ հանդես եկավ համերգային ծրագրով: Հնչեցին կոմիտասյան երգեր և շարականներ:

ՍՈՒՐԲ ԱԲԳԱՐ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՈՆ

2019 թ-ին 7-րդ անգամ ԱՀԹ-ում արքայի տոնը նշեցին շախմատի մրցաշարի անցկացմամբ: Մրցաշարը կազմակերպվում է ԱՀԹ երիտասարդական կառույցների նախաձեռնությամբ: Մրցաշարին մասնակցում էին քահանաներ, զինվորներ, հայաստանյան թեմերի երիտասարդներ, Երևանի շախմատի դպրոցների սաներ, ՀՀ Ուստիկանական ակադեմիայից, Ազգային առաջնորդության ինստիտուտից և այլ ուսումնական հաստատություններից: Խաղը անցկացվում էր 2 փուլով:
1-ին փուլում խաղի 42 մասնակիցները խաղացին միմյանց հետ, ապա անցկացված բոլոր 21 խաղերում հաղթածները միաժամանակյա խաղ անցկացրին միջազգային գրոսմայստերներ, Եվրոպայի և աշխարհի մինչև 18 տարեկանների չեմպիոն, Սամվել Տեր-Սահակյանի և Հայաստանի հավքականի կազմում աշխարհի չեմպիոն դարձած Ռոբերտ Հովհաննիսյանի հետ: Խաղը վարում էր Երևանի շախմատի ֆեդերացիայի գործադիր տնօրեն և փոխնախագահ, միջազգային կարգի մրցավար, միջազգային վարպետ Նորիկ Քալանթարյանը: Գրոյստմայստերների հետ խաղը ոչ ոքի ավարտեց Դավիթ Նահապետյանը: Հաջող խաղ անցկացնելու համար պարգևատրվեցին նաև Էմին Օհանյանը և Հարություն Փանոսյանը: Խաղի ավարտին շնորհակալագրեր և խրախուսական նվերներ հանձնվեցին մասնակիցներին, գրոսմայստերներին և մրցավարին՝ Նորայր Քալանթարյանին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2019թ. Արարատյան Հայրապետական թեմի կողմից նախաձեռնվել և կյանքի են կոչվել բազմաբնույթ բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ: Դրանք իրականացվել են եկեղեցական և պետական հետևյալ տոների ժամանակ:

- Սբ. Ծնունդ և Աստվածահայտնություն
- Սրբոց Վարդանանց
- Սբ. Սարգիս զորավարի տոն
- Տեառնընդառաջ
- Ծաղկազարդ
- Սբ. Աստվածածնի Ավետման տոն
- Մայրության և գեղեցկության օր
- Սբ. Հարություն
- Երեխաների պաշտպանության միջազգային օր
- Սբ. Աստվածածնի վերափոխման
- Սեպտեմբերի 1
- Խաչվերաց
- Տարեցների միջազգային օր
- Հաշմանդամերի միջազգային օր
- Ամանոր:

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնություն տոնի կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել թեմին օգնության դիմումներ ներկայացրած անապահով 23 ընտանիքի (գրենական պիտույքներ, հագուստ, սնունդ, կոշիկ, խաղալիքներ):

14.02.2019թ. **Տեառնընդառաջի առթիվ** բարեգործական այցելություն է իրականացվել Երևանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզ: Տոնական միջոցառման մասնակից 230 երեխաներին բաժանվել է քաղցրավենիք: Գիշերօթիկ հիմունքներով հաստատություն հաճախող 80 փոքրիկներին տրամադրվել է նաև հագուստ:

15.02.2019թ. **Սբ. Սարգսի տոնի առթիվ** առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում կազմակերպված միջոցառման ժամանակ «Հավատ և սեր» ՀԿ-ի 30 և «Լույսի Աստղ» հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաների ՀԿ-ի 25 երեխաներ ստացել են գրենական պիտույքների փաթեթներ (տետրեր, նոթատետրեր, գրիչներ, թերթոններ):

28.02.2019թ. **Վարդանանց տոնի կապակցությամբ** զոհված ազատամարտիների ընտանիքների 18 Վարդանների և Վարդանյանների տրամադրվել են նվերների փաթեթներ՝գրենական պիտույքներ և ձմեռային գլխարկներ:

07.04.2019թ. **Սբ. Աստվածածնի Ավետման տոնի առթիվ**, մկրտության սրբիչներ, օրհնված խաչեր, նարոտներ, մանկական հագուստ է բաժանվել Արտաշատի ծննդատան 15 նորածինների: Ապրիլի 8-ին Արաբկիր համայնքում հաշմանդամություն ունեցող և միայնակ տարեց 50 կանանց համար կազմակերպված միջոցառման մասնակիցներին հագուստ և կոշիկ է նվիրաբերվել:

Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ զոհված ազատամարտիկների ընտանիքների 17 կանանց տրամադրվել է հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ:

Ծաղկազարդի կապակցությամբ Մալաթիայի Սբ. Աստվածածին եկեղեցում համայնքի անապահով ընտանիքների 30 երեխաների, ինչպես նաև «Ալեքս» ՀԿ-ում գրանցված 20 հաշմանդամ երեխաների տրամադրվել են նվերների փաթեթներ:

Սբ. Հարության տոնի կապակցությամբ ԱՀԹ-ում կյանքի կոչված բարեգործական ծրագրի շրջանակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- 18.04.2019թ. առաջնորդարանում սննդի փաթեթներ, հագուստ և կոշիկ է բաժանվել թեմին օգնության խնդրանքով դիմած խիստ անապահով 50 ընտանիքի:
- Բարեգործական այցելություններ են կատարվել թեմի սոցիալապես անապահով բազմազավակ 9 ընտանիքներ: Տրամադրվել է սնունդ, հագուստ և կոշիկ, սպասք, կենցաղային տեխնիկա, գրենական պիտույքներ, խաղալիքներ:

Հունիսի 1-ին՝ **Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ**, նվերների փաթեթներ են բաժանվել անապահով ընտանիքների 32 փոքրիկների (խաղեր և խաղալիքներ, մանկական գրքեր, գրենական պիտույքներ, կոշիկներ, հագուստ):
Ապահովվել է թեմին օգնության խնդրանքով դիմած սոցիալապես անապահով, ծնողազուրկ 10 երեխաների մասնակցությունը «Խնկո Ապոր» անվան ազգային մանկական գրադարանում կազմակերպված ամառային ճամբարին:

Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ են տրամադրվել 18 անապահով ընտանիքի դպրոցահասակ երեխաների:

Խաչվերացի կապակցությամբ իրականացվել են տնայցեր թեմին օգնության դիմումներ ներկայացրած 10 խիստ անապահով, բազմազավակ ընտանիքների: Տրամադրվել է սնունդ և հագուստ:
Տոնի կապակցությամբ բարեգործական միջոցառում է կազմակերպվել Դավթաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցում, որի ընթացքում աջակցություն է տրամադրվել համայնքի խիստ անապահով 10 ընտանիքի:

Տարեցների միջազգային օրվա առթիվ իրականացվել է բարեգործական ծրագիր, որի շրջանակում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

- Հոկտեմբերի 1-ին այցելություն է կատարվել թիվ 1 տուն-ինտերնատ: Տոնական միջոցառման ժամանակ 250 տարեցների սնունդ է նվիրաբերվել:
- Իրականացվել են տնայցեր Նուբարաշենի միայնակ 7 ծերերի:
- Այցելություն է կատարվել «Զորակ» անօթևանների կացարան:

Նոյեմբերի 8-ին ԵԿՄ-ի և «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամի կողմից Եռաբլուր պանթեոնում կազմակերպված մեծարման և հիշատակի միջոցառման մասնակից թիվ 155 դպրոցի 35 սաների նվիրաբերվել են գրենական պիտույքների փաթեթներ:

Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ թեմում նախաձեռնված բարեգործական ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել 158 հաշմանդամի: Կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

- Դեկտեմբերի 3-ին Պայծառ և Արշավիր Կարապետյանների բարեգործական ճաշարանում Արաբկիրի հաշմանդամների ասոցիացիայի հաշմանդամների համար Արաբկիր համայնքի թաղապետարանի կողմից կազմակերպվել է սիրո ճաշ: Թեմը հոգևոր և նյութական աջակցություն է ցուցաբերել, տրամադրել նոր հագուստ, գրենական պիտույքների փաթեթներ:
- Դեկտեմբերի 4-ին Խարբերդում հաշմանդամություն ունեցող երեխաների համար կազմակերպվել է բարեգործական միջոցառում, որն ուղեկցվել է օրհնությամբ, տոնական համերգով, հյուրասիրությամբ և նվիրաբաշխությամբ: «Լույսի Աստղ» և «Ալեքս» հաշմանդամ և սոցիալապես անապահով ընտանիքների ՀԿ-ների 80 երեխաների տրամադրվել են գրենական պիտույքների փաթեթներ, նոր հագուստ և կոշիկ:
- Աջակցություն է ցուցաբերվել թեմին օգնության դիմումներ ներկայացրած ծանր սոցիալական պայմաններում գտնվող և հաշմանդամություն ունեցող 9 ընտանիքի:
- Կատարվել է 5 տնայց հաշմանդամների ընտանիքներ:

Ամանորի և Սբ. Ծննդյան տոների առթիվ իրականացվել է բարեգործական ծրագիր, որի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել անապահով 30 ընտանիքի (հագուստ, սննդի փաթեթեներ, հիգինեյի պարագաներ, կենցաղային անհրաժեշտ իրեր):
Դեկտեմբերի 28-ին Մալաթիայի Սբ. Աստվածածին եկեղեցու համայնքի անապահով 50 ընտանիքի երեխաների տրամադրվել են քաղցրավենիք և գրենական պիտույքներ:

World Vision Armenia միջազգային կազմակերպության կողմից թեմին տրամադրվել է ոչ դրամական օգնություն, որով օժանդակություն է ցուցաբերվել թեմին աջակցության խնդրանքով դիմած հետևյալ տեղական հասարակական կազմակերպություններին, միություններին և ընկերություններին.

- «Զեյթուն» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Լույսի Աստղ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Էրեբունու համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքների» ընկերություն
- «Մարիամ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամ
- «Տաթև» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Լուսաշող» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Հուսաստղ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- Արաբկիր համայնքի հաշմանդամների ընկերություն
- «Ալեքս» ՀԿ
- «Հավատ և սեր» ԲՀԿ
- «Արև-Երեխաներ» երեխաների առողջության և զարգացման կենտրոն ՀԿ:

Թեմի կրթական հաստատությունների, ծխական և կիրակնօրյա դպրոցների, ինչպես նաև մանկական երգչախմբերի սաները նույնպես եղել են թեմի բարեգործական ծրագրերի ուշադրության կենտրոնում:

Բազմակողմանի աջակցություն է ցուցաբերվել հետևյալ հաստատություններին.

- Երևանի տեսողական խանգարումներ ունեցող երեխաների՝ Տիգրանյանի անվան թիվ 14 հատուկ դպրոց
- Թիվ 1 տուն -ինտերնատ
- «Խարբերդի հատուկ մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ
- Երևանի խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն
- Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ
- Նորքի թիվ 17 հատուկ դպրոց

- Երևանի թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ
- Նոր Նորքի հատուկ գիշերօթիկ դպրոց
- «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն
- «Առաքելություն Հայաստան» Մասիսի ցերեկային կենտրոն
- Մասիսի զարգացման երիտասարդական կենտրոն
- ՀՕՖ «Երեխաների աջակցության կենտրոն»
- Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն
- Դատապարտյալների հիվանդանոց
- «Մոր և մանկան» ծննդատուն
- Մասիսի «Զարգացման երիտասարդների կենտրոն»
- Գյումրու մանկատուն
- Արտաշատի «Երեխաներ զարգացման կենտրոն»
- «Ջերմիկ անկյուն» հաշմանդամների կենտրոն
- Արտաշատի ծննդատուն:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Միության առաքելությունն է կրթել երիտասարդներին՝ համախմբելով նրանց ազգային ու հոգևոր արժեքների շուրջ: Առանձնահատուկ կարևորվում է երիտասարդների շնորհների բացահայտումն ու նրանց ինքնահաստատումը հասարակական կյանքում:

Թեմում գործում է 22 երիտասարդաց միություն՝ 480 անդամներով:

ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Իր անփոխարինելի տեղն ունի եկեղեցական – համայնքային կյանքում: Մայրական հոգատարությամբ տիկնանց միության անդամները մասնակցում են եկեղեցու սոցիալական ծրագրերին, կազմակերպում բարեգործական միջոցառումներ, այցելություններ ծերանոց, մանկատուն, համայնքի միայնակ ծերերին: Եկեղեցին մեծ ընտանիք է, որտեղ մոր առաքելությունը վստահված է Տիկնանց միության անդամներին:

Թեմում գործում է Տիկնանց 14 միություն՝169 անդամներով:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համայնքի գործադիր վարչական մարմինն է՝ հոգևոր հովվի նախագահությամբ, որի նպատակն է աջակցել եկեղեցու հոգևորականների հովվական գործունեության մեջ և օժանդակել եկեղեցու համայնքի ձևավորմանն ու ծխի կայացմանը: Ծխական խորհուրդն ընտրվում է ծխի անդամներից:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Այս կառույցի առաքելությունն է դաստիարակել քրիստոնեական բարձր նկարագիր ունեցող սերունդ: Երեխաների քրիստոնեական դաստիարակությունը մեր ինքնության, ազգային ու հոգևոր արժեքների, զորացման գրավականն է:

Թեմում գործում է կիրակնօրյա 14 դպրոց՝ 1018 աշակերտներով:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ՝

- «Աղոթագիրք» (Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցի)

- «Քարոզներ» (Տեր Գրիգոր քին. Գրիգորյան, Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցի)

- Առանձնակի ուշադրության է արժանի հոկտեմբերի 28-ին Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում ժեստերի լեզվի թարգմանությամբ թողարկված **«Աստվածաշնչի մարգարեները» տեսասկավառակի** շնորհանդեսը: Տեսասկավառակում ժեստերի լեզվի թարգմանությանն ուղեկցում են պատկերներ և տեքստ՝ առավել մատչելի դարձնելով մտքի ընկալումը: Սկավառակի պատրաստման համար աշխատել են ԱՀԹ խուլերի համայնքը, ժեստերի լեզվի թարգմանիչներ, Հայաստանի Աստվածաշնչային ընկերությունը, Արարատյան թեմի առցանց հեռուստաալիքը՝ «Թեմ TV»-ն: Այս ծրագիրն իրականություն դարձավ թեմի խուլերի համայնքի ջանքերով և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության ֆինանսական աջակցությամբ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԾՎԵԼ ԵՆ

- Օծվեց և տեղադրվեց Արարատի մարզում գտնվող Պապ սարի գագաթին կառուցվող եկեղեցու **խաչը**:

- Օծվեց Քանաքեռի Սբ. Աստվածածին եկեղեցու ***Սուրբ Խորանը***:

- Կատարվեց Արարատի մարզի Այգեզարդ գյուղում Սրբոց Վարդանանց Նահատակաց **եկեղեցու հիմնարկեքի արարողությունը**:

- Կատարվեց Շահումյան գյուղի Շահումյան համայնքի **մատուռի օրհնությունը**:

- Օծվեց Շենգավիթի նորակառույց Սրբոց Առաքելոց եկեղեցին:



www.qahana.am